## ՄԵՐ ՀՈԲԵԼՅԱՐՆԵՐԸ ✦ НАШИ ЮБИЛЯРЫ

# ՌՈՒԲԵՆ ԶԱՐՅԱՆ

(Ծննդյան 80-ամյակի առթիվ)

ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Ռուբեն Զարյանն իր ստեղծագործական ոգու և պայծառ մտքի մղումով հիսուն տարուց ավելի է ինչ բեղմնավոր աշխատում է մեր ժողովրդի հոգևոր արժեքների լուսաբանման ասպարեզում: Նրա գրչին են պատկանում բանասիրական և թատերագիտական մեծարժեք աշխատություններ ու հոդվածներ: Ուստի և իրավամբ նա դասվում է մեր գիտական մտավորականության այն լավագույն ներկայացուցիչների թվին, որոնք ապրում և գործում են հայրենիքին անմնացորդ ծառայելու մտումով:



Ռուբեն Վարոսի Զարյանը (Ղազանչյան) ծնվել է Ալեքսանդրապոլում (1909 թ., 1 սեպտեմբերի). սակայն նրա մանկության ու պատանեկության օրրանն է դարձել թիֆլիսյան միջավայրը՝ հայ մշակույթի վաղեմի նշանավոր կենտրոնը. որի հարուստ ավանդներն այն տարիներին դեռևս թարմ էին և շատ բանով ուսանելի նորահաս սերնդի համար: Այստեղ են կազմավորվել ապագա գրականագետի և արվեստաբանի հակումներն ու նախասիրությունները: Այստեղ էլ նա ստացել է միջնակարգ կրթություն և մի որոշ ժամանակ ուսանել Հայարտան դրամատիկական ստուդիայում:

1936-ին. Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետն ավարտելիս, երիտասարդ Ռ. Զարյանն արդեն մի շարք հոդվածների հեղինակ էր և ճանաչում էր ձեռք բերել գրական-գեղարվեստական կյանքում: Դրան, իհարկե, մեծապես նպաստել են թե՛ նրա բնատուր ընդունակությունները ու աշխատասիրությունը, թե՛ փորձառու, բանիմաց դասախոսների հսկողությունն ու քաջալերումը և թե՛ շփումը գրականության և արվեստի ականավոր գործիչների հետ. հատկապես՝ Եղիշե Չարենցի, Ավետիք Իսահակյանի, Դերենիկ Դեմիրճյանի, Ալեքսանդր Շիրվանզադեի. Երվանդ Շահազիզի: Այս ժամանակահատվածը նրա կյանքում կարևոր շրջափուլ էր նաև գիտական հետաքրքրությունների հասունացման, գեղարվեստական չափանիշների ճշգրտման և հետագա գործունեության մեջ ինքնորոշվելու առումով:

Եվ բնավ էլ պատահական չէ. որ կարճ ժամանակամիջոցում Ռ. Զարյանն իրեն դրսևորել է ոչ միայն իբրև լրջմիտ բանասեր, այլև հրատարակչական և խմբագրական գործի հմուտ կազմակերպիչ: Երկու տարի նա Հայպետհրատի գեղարվեստական գրականության բաժնի վարիչն էր (1938—1947 թթ.), ապա և «Սովետական գրականություն» ամսագրի խմբագիրը (1941—1943 թթ.):

Բայց որքան էլ լարված ու բազմազբաղ էր նրա աշխատանքային առօրյան այդ բնագավառում, այնուամենայնիվ գրականագիտական հետազոտումների օգտաբեր պտուղները ևս երկար սպասել չեն տվել: 1939-ին «Աբովյանի կյանքը» խորագրով լույս է տեսել Ռ. Զարյանի անդրանիկ մենագրությունը: Փոքրածավալ այս գիրքն իր թարմաշունչ հարցադրումներով ու հիմնավոր եզրակացություններով ժամանակին մեծ հետաքրքրություն է առաջացրել ընթերցողների մեջ (թերևս. հիմա էլ չի կորցրել իր գրավչությունը) և արժանի համբավ բերել հեղինակին. որը 1940-ին պաշտպանության է ներկայացրել «Աբովյանի «Նախաշավիղը» և նրա պատմությունը» թեկնածուական դիսերտացիան և ստացել իր հայցած գիտական աստիճանը:

Անշուշտ, արդյունավետ ու խոստումնալից էր գրականագիտական ուսումնասիրությունների ուղին, այդուհանդերձ հետագայում Ռ. Զարյանին առավել հոգեհարազատ դարձավ թատերագիտության ասպարեզը: Եվ պետք է նկատել, որ այստեղ նրա արգասաբեր գործունեության կշիռն անհամեմատ ծանր է ու նշանակալի:

1948-ից, ստանձնելով Երևանի թատերական ինստիտուտի (1952-ից՝ գեղարվեստա-թատերական ինստիտուտ) արվեստի պատմության և տեսության ամբիոնի վարիչի պաշտոնը, նա դասավանդել է հայ թատրոնի պատմություն և միաժամանակ խորամուխ եղել այդ առարկային իբրև հետազոտող գիտնական: Տարիներ հետո էլ, երբ նա Հայաստանի գիտությունների ակադեմիայի արվեստի տեսության և պատմության սեկտորի վարիչն էր (1953—1958 թթ.), իսկ 1958-ից նույն սեկտորի հիման վրա ստեղծված արվեստի ինստիտուտի տնօրենը, մանկավարժությունը հաջողությամբ զուգորդել է և՛ կազմակերպչական, և՛ գիտահետազոտական աշխատանքների հետ:

Այդ ժամանակաշրջանում Ռ. Զարյանը հրատարակման է պատրաստել Գաբրիել Սունդուկյանի երկերի երեք հատորները, որոնք կարող են օրինակելի համարվել իբրև տեքստաբանական աշխատանքի բարձրորակ նմուշներ: Հրապարակել է «Թատերական դիմանկարներ» (գիրք I, 1956), «Սիրանույշ» (1957), «Ադամյան. Արվեստը» (1960), «Ադամյան. Կյանքը» (1961) ծավալուն մենագրությունները: Բազմակողմանիորեն ուսումնասիրելով մեծ դերասանուհու ստեղծագործական ուղին, հեղինակը խորունկ ըմբռնումով է լուսաբանել Սիրանույշի ստեղծած արվեստի բոլոր գույներն ու նրբերանգները: Ճիշտ այդպես էլ կարողացել է հավերժացնել հայ բեմի մյուս խոշորագույն վարպետի՝ Պետրոս Ադամյանի հանճարը, հաղորդակից դարձնելով մեզ նրա անզուգական խաղի հմայքին:

Հարկ է առանձնակի նշել, որ դիմանկարային ժանրում Ռ. Զարյանն իրապես հասել է կատարելության: Գիտնականի գրչին պատկանող այս կարգի բազմաթիվ աշխատություններն ու հոդվածները, ինչպես նաև հուշագրությունները («Հուշապատում», «Մայրամուտից առաջ») նշանավոր դեմքերի, պատմական իրադարձությունների, ուշագրավ դեպքերի ու դրանց հետ կապված անձանց մեծահարուստ մի պատկերասրահ են կազմում: Անգնահատելի արժեք ունի յուրահատուկ այս հանրագիտարանը, որ ապագայում էլ կմնա արդիական և արվեստասեր ընթերցողների սևեռուն ուշադրության կենտրոնում:

Արժեքավոր է Ռ. Զարյանի վաստակը նաև շեքսպիրագիտության բնագավառում: Անգլիացի հանճարեղ դրամատուրգի և պոետի հարուստ ժառանգությունը վաղուց է ինչ դարձել է հարազատ հայերին: Նշանակալի է եղել նրա ազդեցությունը և՛ գրականության մեջ, և՛ թատրոնում: Այս իրողությունը վավերացված է դեռևս անցյալ դարավերջից: Սակայն հայ ժողովրդի մշակութային կյանքում և մասնավորապես դրամատիկական արվեստում ժողովված շեքսպիրյան ավանդույթների խորազնին ուսումնասիրությամբ առաջին անգամ հանդես է եկել Ռուբեն Զարյանը, հրապարակելով «Շեքսպիրը և հայերը» (1967), «Շեքսպիրի հետ» (1976) աշխատությունները: Իսկ տարիներ հետո, նա իր մտորումները, դիտարկումներն ու եզրահանգումները ամփոփել է «Էջեր հայկական շեքսպիրապատումից» աշխատության երկու հատորներում, որոնց համար 1981-ին արժանացել է Հայկական ԽՍՀ պետական մրցանակի:

Ռ. Զարյանի մի շարք աշխատություններ թարգմանվել են ռուսերեն, վրացերեն, գերմաներեն, ֆրանսերեն, իտալերեն, իսպաներեն:

Արդարև, քչերին է հաջողվում ակտիվ գիտական գործունեությունը շահեկանորեն համադրել նույնքան ակտիվ կազմակերպչական գործունեության հետ: Ռուբեն Զարյանն այդ սակավաթիվ գիտնականներից է, ընդ որում գիտնական, որը մասնագիտացել է ոչ թե սոսկ մի բնագավառում, այլ կարողացել է իրազեկ լինել արվեստաբանության բովանդակ էությանը և տեսնել մեզանում նրա զարգացման հեռանկարային ուղին: Հենց այս հատկությունների շնորհիվ էլ նա իր երկարամյա (84 տարի) տնօրինության ընթացքում Հայաստանի ԳԱ արվեստի ինստիտուտն իսկապես դարձրել է հայ արվեստաբանության պատկառելի մի «շախ», որը բարի համբավ է ձեռք բերել ոչ միայն հանրապետությունում, այլև Միության մեջ և նրա սահմաններից դուրս: Ինստիտուտում ստեղծվել են կերպարվեստի, երաժշտագիտության, ճարտարապետության, ժողովրդական արվեստի, թատրոնի, կինոարվեստի և հեռուստատեսության բաժիններ, ինչպես նաև շեքսպիրագիտության կենտրոն և շեքսպիրագիտական գրադարան: Լույս են տեսել հայ արվեստի բոլոր ճյուղերին վերաբերող ստվարաթիվ աշխատություններ, կազմակերպվել են մի շարք գիտաժողովներ:

Լայնածավալ ու բազմաբովանդակ է եղել Ռ. Զարյանի նաև հասարակական գործունեության ասպարեզը, որը նա մուտք է գործել ոչ միայն իբրև հարուստ փորձ ու վաստակ ունեցող գիտնական, այլև հայ մշակույթի ու արվեստի նախանձախնդիր պրոպագանդիստ: Իր այդ նվիրական առաքելությունը նա սրբությամբ է կատարել և՛ նախագահելիս Հայկական ՍՍՀ գրականության, արվեստի և ճարտարապետության պետական մրցանակների հանձնաժողովը, և՛ լինելով թղթակից անդամ Հռոմի «Տիբերինա» ակադեմիայի, անդամ Գերմանական շեքսպիրագիտական ընկերության, Հայաստանի գրողների միության վարչության, թատերական գործիչների միության նախագահության, տարբեր հաստատությունների գիտական ու գեղարվեստական խորհուրդների, հանդեսների խմբագրական կոլեգիաների, և վերջապես՝ իր ամենօրյա կյանքում, լինի դա դասախոսություն, բանավոր ելույթ կամ թե պարզապես զրույց: Այստեղ չի կարելի շրջանցել մի հատկանիշ ևս, որը շատ կարևոր է Զարյան գիտնականին բնութագրելու համար: Դա նրա բացառիկ դիտողականությունն է՝ թաքնվածը տեսնելու, չբացահայտվածը բացահայտելու ունակությունը, որը հաճախ է օգնել նրան գեղարվեստական երևույթներն ըստ արժանվույն գնահատելու:

Այսօր Ռուբեն Զարյանը բոլորել է իր կյանքի 80 տարին՝ անցնելով ծիգ ու երանելի մի ճանապարհ, որի բազմանշանակ խորհուրդն ամեն անգամ մի նոր խորությամբ է իմաստավորվում նրա աշխատություններում: Ցանկանք հոբելյարին քաջառողջություն և երկար տարիների ստեղծագործական կորով:

Դ. Վ. ՕՐԴՅԱՆ